

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկմամբ վարկային հաշվիչից օգտվելու

Հաշվիչը գործարկելու համար անհրաժեշտ է Ձեր համակարգչում, որևէ Microsoft Excell ֆայլում նշել Tools, այնուհետև Add-Ins... և ակտիվացնել Analysis ToolPak պատուհանը, որից հետո միայն բացել «Փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչ»:

1. Ընդհանուր դրույթներ

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկմամբ վարկային հաշվիչը իրենից ներկայացնում է Microsoft Excell ծրագրային միջավայրում մշակված հաշվարկային ֆայլ: Այն կառուցված է 2 վահանակներից՝ նվազող և հաստատուն մարումներով վարկերի հաշվարկման համար համապատասխանաբար: Վահանակները նախապես ֆորմատավորված են տպագրման համար հարմար ֆորմատով (A4):

2. Դաշտերի լրացումը

2.1. Լրացվում են միայն կապույտ գույնով նշված դաշտերը՝ մյուս դաշտերը փոփոխման ենթակա չեն:

2.2. Դաշտերի արժեքները, ինչպիսիքն են վարկի տրամադրման տոկոսադրույքը, վարկի սպասարկման և վարկային հայտի ուսումնասիրության միջնորդավճարները և այլն, կարող եք լրացնել օգտվելով կայքում տեղակայված տվյալներից

2.3. Վարկի տրամադրման ժամկետը կարող եք լրացնել ինքնուրույն՝ համեմատելով Բանկի կողմից տրամադրվող վարկատեսակների ժամկետների հետ:

2.4. Վարկի տրամադրման օրը կարող եք ընտրել ինքնուրույն՝ միայն աշխատանքային օր:

2.5. Եթե Ձեր կողմից հաշվարկվող վարկատեսակի գումարը ցանկանում եք ստանալ կանխիկ, ապա «Կանխիկ/Անկանխիկ» դաշտում ընտրեք «այո»:

2.6. Եթե Ձեր կողմից հաշվարկվող վարկատեսակը պահանջում է գրավային ապահովվածություն և գրավի առարկան ենթակա է ապահովագրման, ապա լրացրեք «Ապահովագրության վճարի տոկոս» դաշտը:

3. Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A – տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.

n - վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.

N - վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

K_n - վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

D_n - վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ: